

Տասնմեկերորդ հաղորդում

Բոռսը և Հռութը՝ Քրիստոսի և եկեղեցու նախատիպեր

Գրվածքների ընթերցում. Հոթ 1:16-17, 2:1-3, 13-16, 3:9, 12, 15, 4:1-17, 21-22

I. Իսրայելի պատմության այն բաժնի սկզբում և վերջում, որ Հեսուի գրքից մինչև Հռութի գիրքն է, երկու ակնառու անձինք կան, որոնք Քրիստոսի նախատիպերն են. այդ անձինք Հեսուն և Բոռսն են, որոնք խորհրդապատկերում են մեկ անձի երկու տեսանկյունները՝ Հս 1:1, Հոթ 4:21-22.

Ա. Սկզբում տեսնում ենք Հեսուին. նա այն բանով է Քրիստոսի նախատիպը, որ Աստծու ընտրյալ մարդկանց բերեց Աստծու սահմանած օրհնությունների մեջ. որպես Հեսուի նախատիպի իրականացում՝ Քրիստոսը մեզ բերեց բարի երկիրը, մեզ համար տիրեց երկրին և մեր վայելքի համար երկիրը հատկացրեց մեզ որպես մեր ժառանգությունը. Քրիստոսը բարի երկիրը ձեռք է բերել մեզ համար, և, ի վերջո, Նա է մեզ համար բարի երկիրը, որը կարող ենք վայելել:

Բ. Վերջում տեսնում ենք Բոռսին. նա Քրիստոսի՝ որպես մեր ամուսնու նախատիպ է՝ մեր բավարարվածության համար:

II. Հռութի գրքում Բոռսը Քրիստոսի նախատիպն է հետևյալ տեսանկյուններում.

Ա. Որպես մի մարդ, որ ունեցվածքով հարուստ էր և առատաձեռնորեն տվող (2:1, 14-16, 3:15), Բոռսը Քրիստոսի նախատիպն է, ում աստվածային հարստությունն անքննելի է, և ով Իր առատ մատակարարմամբ հոգ է տանում Աստծու կարիքավոր մարդկանց համար (Եփս 3:8, Ղկս 10:33-35, Փլպ 1:19):

Բ. Որպես այն ազգականը (Հոթ 2:3, 3:9, 12), որը փրկագնեց Մահլոնի ունեցվածքի կորցրած իրավունքը և որպես կին վերցրեց Մահլոնի այրուն՝ Հռութին, անհրաժեշտ ժառանգներին ծնունդ տալու համար (4:9-10, 13), Բոռսը Քրիստոսի նախատիպն է, ով փրկագնեց եկեղեցին և եկեղեցին Իր աճի համար դարձրեց իր գույգը (Եփս 5:23-32, Հվի 3:29-30):

Գ. Հռութի գրքի համաձայն՝ Բոռսը փրկագնեց Հռութին և փրկագնեց նրա առաջնեկությունը. հետևաբար նա դարձավ Քրիստոսի նշանավոր նախահայր՝ 4:1-17, 21-22, Մոթ 1:5-6.

1. Լինելով եղբայր և «Բոռս»՝ դուք պետք է հոգ տանեք ուրիշների՝ Քրիստոսի առաջնեկության իրավունքի համար և ոչ թե միայն ձեր սեփական առաջնեկության իրավունքի. այլ կերպ ասած՝ դուք պետք է հոգ տանեք ոչ միայն ձեր՝ Քրիստոսին վայելելու, այլև ուրիշների՝ Քրիստոսին վայելելու համար՝ Եփս 3:2, Ա Պտ 4:10-11, Մոթ 24:45-47:

2. Ենթադրենք՝ եկեղեցական կյանքում որոշ սիրելի սրբեր դառնում են Հռութի պես՝ կորցնելով իրենց առաջնեկության վայելքը՝ Քրիստոսի

ՀՈՌԻԹԻ ԳԻՐՔ

վայելքը. մենք պետք է եկեղեցական կյանքում շատ «Բոսներ» ունենանք, որոնք այս սիրելի սրբերին կվերադարձնեն Քրիստոսի վայելքին:

3. Հռութի գիրքն ասում է, որ մեկ այլ ազգական կար, ով Հռութին էլ ավելի մոտ էր, քան Բոսը, բայց այդ մարդը եսասեր էր. նա միայն իր սեփական առաջնությունների համար էր հոգ տանում.

ա. Որոշ եղբայրներ պետք է հոգ տանեն նրանց համար, ովքեր եկեղեցական կյանքում աղքատ «Հռութների» պես են, բայց նրանք Քրիստոսի հոգևոր վայելքի հարցում եսասեր են՝ 34:2-23:

բ. Ինչ-որ մեկը, որը իսկական Բոս է և հարուստ է Քրիստոսի վայելքով, կվճարի գինը, որպեսզի այսպիսի սրբերի բերի Քրիստոսի լիարժեք վայելքի մեջ. ուրիշներին այսպես հովվելով՝ նա Քրիստոսի էլ ավելի մեծ վայելք կստանա՝ Քրիստոսի ամենամեծ վայելքը. մենք պետք է օրեցօր հոգ տանենք այն բանի համար, որ ուրիշները վայելեն Քրիստոսին՝ Առկ 11:25, Գրծ 20:35, Ա Պտ 5:1-4:

Դ. Նրանք, ովքեր Բոսի նման են դառնում, եկեղեցական կյանքում սյուններ են (տաճարի սյուներից մեկն անվանում էին «Բոս»՝ Գ Թգ 7:21). Գրվածքներում սյունն Աստծու կառույցի նշան է, վկայություն, որն առաջանում է Մարմնի կյանքը կիրարկելիս փոխակերպվելու միջոցով՝ Ծնդ 28:22ա, Ա Թգ 7:15-22, Գղտ 2:9, Ա Տմբ 3:15, Հյտ 3:12, Հոմ 12:2, Եփս 4:11-12.

1. Նրանք, ովքեր եկեղեցական կյանքում սյուններ են, մշտապես Աստծու դատաստանի (բրոնզի) տակ են՝ զիտակցելով, որ իրենք մտերի մեջ եղող մարդիկ են, որը ոչ մի բանի արժանի չէ՝ բացի մահից և թաղումից՝ Մղմ 51:5, Ելց 4:1-9, Հոմ 7:18, Մտք 3:16-17.

ա. Մենք ինքներս մեզ պետք է դատենք՝ ընդունելով, որ ոչինչ ենք և որ միայն խաչվելու ենք արժանի. ինչ էլ որ ենք, Աստծու շնորհքով ենք, և ոչ թե մենք ենք տքնում, այլ Աստծու շնորհքը՝ Ա Կրթ 15:10, Գղտ 2:20, Ա Պտ 5:5-7:

բ. Հավատացյալների և՛ բաժանության, և՛ անպտղության պատճառն այն է, որ նրանք չունեն բրոնզ՝ Աստծու դատաստանից որևէ բան. փոխարենը նրանք հպարտ են, իրենցով են պարծենում, ինքնապաշտպանվում, ինքնարդարանում, ինքնահաստատվում, իրենց հանդեպ ներողամիտ են, իրենց արդար են համարում, իսկ ուրիշներին դատում ու ղեկավարում են՝ հովվելու և փնտրելու փոխարեն՝ Մտք 16:24, Ղկս 9:54-55:

գ. Երբ մենք սիրենք Տիրոջն ու փորձառաբար ապրենք Նրան՝ որպես բրոնզե մարդու (Եզկ 40:3), Նա կդառնա մեր արտասովոր սերը, անսահման երկայնամտությունը, աննախադեպ հավատարմությունը, բացարձակ խոնարհությունը, ծայրաստիճան

մաքրությունը, գերագույն սրբությունն ու արդարությունը և մեր շողալն ու արդարամտությունը՝ Փլպ 4:5-8:

2. Տաճարի սյուների գլուխների վրա «հյուսկեն աշխատանքի ցանցեր կային [ցանկաշարի նման] շղթայական աշխատանքի պսակներով»։ սրանք խորհրդապատկերում են բարդ և փոխխճճված իրավիճակներ, որոնցում ապրում և պատասխանատվություն են կրում նրանք, ովքեր Աստծու կառույցում սյուներ են՝ Գ Թգ 7:17, Բ Կրթ 1:12, 4:7-8:
3. Սյուների գլուխների գագաթին շուշաններ և նռներ էին՝ Գ Թգ 7:18-20.
 - ա. Շուշանները խորհրդապատկերում են Աստծու հանդեպ հավատքի կյանքը, մի կյանք, որում մենք ապրում ենք այն ամենով, ինչ Աստված է մեզ համար, ոչ թե այն ամենով, ինչ մենք ենք. բրոնզը նշանակում է «ոչ թե ես», իսկ շուշանը՝ «այլ Քրիստոսը»՝ Երգ 2:1-2, Մտք 6:28, 30, Բ Կրթ 5:4, Գղտ 2:20:
 - բ. Սյուների գլուխների պսակների վրայի դրված նռները խորհրդապատկերում են Քրիստոսի՝ որպես կյանքի հարստության լեցունությունը, առատությունն ու գեղեցկությունը, ինչպես նաև արտահայտությունը՝ Փլպ 1:19-21ա, Եփս 1:22-23, 3:19:
 - գ. Հյուսկեն աշխատանքի հատման և շղթայական աշխատանքի սահմանափակման միջոցով մենք կարող ենք Աստծուն ապավինելու մաքուր, հասարակ կյանքով ապրել՝ Աստծու՝ կյանքում եղող կառույցի համար արտահայտելով Քրիստոսի աստվածային կյանքի հարստությունը:

III. Այս լուսավոր և անուշահոտ պատմության մեջ Հռութը եկեղեցու նախատիպն է հետևյալ տեսանկյուններում.

- Ա. Հռութը, Աստծու ստեղծագործությունում լինելով կին Ադամի մեջ և մովաբուհի (մեղավոր)՝ մարդու անկման մեջ (այդպիսով այս երկու տեսանկյուններով դառնալով հին մարդ), եկեղեցու նախատիպն է նախքան նրա փրկությունը՝ Աստծու ստեղծագործության մեջ եղող մարդկանց և մարդու անկման մեջ եղող մեղավորների, որոնք «մեր հին մարդն» են՝ Հռմ 6:6:
- Բ. Հռութը, լինելով մահացած ամուսնու այրին՝ Բոոսի կողմից փրկագնված, որը վերացրեց նրա մահացած ամուսնու պարտքը՝ իր մահացած ամուսնու ունեցվածքի կորցրած իրավունքը վերականգնելու համար (Հռթ 4:9-10), եկեղեցու նախատիպն է, որի հին մարդը նրա խաչված ամուսինն է (Հռմ 7:4ա, 6:6), և որին Քրիստոսը փրկագնել է, ով վերացրել է նրա հին մարդու մեղքը (Հվի 1:29), որպեսզի վերականգնի նրա՝ Աստծու կողմից ստեղծված, բայց ընկած բնական մարդու կորցրած իրավունքը (Ծնդ 1:26, Եսյ 54:5):
- Գ. Հռութը, Բոոսի կողմից փրկագնվելուց հետո նրա համար նոր կին դառնալով (Հռթ 4:13), եկեղեցու նախատիպն է, որը, փրկված լինելով,

ՀՈՌԻԹԻ ԳԻՐՔ

եկեղեցու բնական մարդու վերածննդի միջոցով (Հվի 3:6բ) դարձավ Քրիստոսի զույգը (Խ. 29ա, Հոմ 7:4):

- Դ. Հուրքը, ընտրելով Նոյեմիին դեպի Իսրայելի երկիրը հետևելը (Հոթ 1:16-17) և միանալով Բոոսին, հեթանոս մեղավորների նախատիպ է, ովքեր միացել են Քրիստոսին (Բ Կրթ 1:21), որպեսզի հաղորդ լինեն Աստծու խոստման ժառանգությանը (Եփս 3:6):

IV. Բոոսի (որը Քրիստոսի՝ որպես մեր նոր ամուսնու նախատիպն է) և Հուրքի (որը եկեղեցու նախատիպն է նրա հին մարդու՝ որպես խաչված ամուսնու հետ) նկարի մասին Պողոսը խոսում է Հոմ 7:1-6-ում.

Ա. Աստծու ստեղծագործության մեջ մարդու սկզբնական դիրքը կնոջ դիրքն էր. Եսայ 54:5-ն ասում է, որ Աստված՝ մեր Արարիչը, մեր ամուսինն է. որպես Աստծու համար կին՝ մենք պետք է կախված լինենք Նրանից և ընդունենք Նրան՝ որպես մեր Գլխի:

Բ. Երբ մարդն ընկավ, նա մեկ այլ դիրք զբաղեցրեց՝ հին մարդու յուրացրած դիրքը (մեր բուն էության, որը ստեղծվել էր Աստծու կողմից, բայց մեղքի պատճառով դարձել ընկած). Աստծու ստեղծած մարդը կին էր, բայց ընկած մարդն անկախացավ Աստծուց և իրեն դարձրեց գլուխը՝ որպես ամուսին:

Գ. Քանի որ մեր հին մարդը, որը հին ամուսինն էր, Քրիստոսի հետ խաչվել է (Հոմ 6:6), մենք ազատված ենք նրա օրենքից (7:2-4) և միացած ենք նոր Ամուսնուն՝ Քրիստոսին, միշտ կենդանի Անձին:

Դ. Որպես հավատացյալներ՝ մենք ունենք երկու կարգավիճակ.

1. Մենք ունենք մեր՝ որպես ընկած հին մարդու հին կարգավիճակը, որը թողեց Աստծուց կախված կնոջ սկզբնական դիրքը և յուրացրեց Աստծուց անկախ ամուսնու և գլխի դիրքը:

2. Մենք ունենք մեր՝ որպես վերածնված նոր մարդու կարգավիճակը, երբ վերադարձանք մեր՝ որպես Աստծու իսկական կնոջ սկզբնական և պատշաճ դիրքին (Եսայ 54:5, Բ Կրթ 11:2-3), ով կախված է Նրանից և ընդունում է Նրան՝ որպես մեր Գլխի:

Ե. Մենք այլևս ամուսնու հին կարգավիճակը չունենք, որովհետև խաչվել ենք (Գղտ 2:20, Հոմ 6:6). մենք հիմա միայն պատշաճ կնոջ նոր կարգավիճակն ունենք, որում մենք Քրիստոսին ընդունում ենք որպես մեր Ամուսնու, և այլևս չպետք է ապրենք ըստ հին մարդու (այլևս չպետք է ընդունենք հին մարդուն՝ որպես մեր ամուսնու):

Զ. Հոմ 7:4-ում Պողոսը համադրում է թաղումը և հարսանիքը. մի կողմից՝ մենք թաղվեցինք. մյուս կողմից՝ ամուսնացանք. մենք մեռանք՝ ըստ մեր հին կարգավիճակի, որպեսզի կարողանանք ամուսնանալ ուրիշի հետ՝ ըստ մեր նոր կարգավիճակի. ըստ մեր նոր կարգավիճակի՝ մենք ամուսնանում ենք Նրա հետ, ով մեռելներից հարություն է առել, որպեսզի կարողանանք Աստծու համար պտուղ բերել:

Է. Մեր հին մարդը՝ մեր հին ամուսինը, խաչվել է Քրիստոսի հետ, որպեսզի մենք «ուրիշի միանա[ն]ք» Նրան, ով հարուցանվել է մեռելներից,

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

որպեսզի մենք Աստծու համար պտուղ բերենք» (Խ. 4). այս միանալը ցույց է տալիս, որ մենք կնոջ մեր նոր կարգավիճակում Քրիստոսի հետ Նրա հարության մեջ անձով, անունով, կյանքով և գոյությամբ օրգանական միություն ունենք:

- Ը. Քանի որ մենք հիմա վերածնված նոր մարդն ենք և Քրիստոսի կինը, այն ամենը, ինչ մենք ենք և անուն ենք, կապված է Աստծու հետ, և մենք առաջացնում ենք Աստծուն՝ որպես մեր կյանքի պտղի, արտահոսքի. սա հակադրվում է մահվան համար բերած պտղին (Խ. 5), որը մենք՝ որպես հին մարդ, հին ամուսին, նախկինում բերում էինք:
- Թ. Մենք հիմա մեր հոգում միացած ենք հարություն առած Քրիստոսին՝ որպես կենդանարար Հոգու. սա այն է, որ «Հոգին.... մեր հոգու հետ» (8:16) միանում է, դառնում «մեկ հոգի» (Ա Կրթ 6:17).
 - 1. Մենք պետք է մեր ողջ էությունը շրջենք և սկեռենք այս միացած հոգու վրա՝ Հոմ 8:6բ:
 - 2. Մենք նաև պետք է ապրենք և քայլենք այս միացած հոգու համաձայն՝ Խ. 4:
 - 3. Երբ մենք այսպես ապրում ենք այս միացած հոգում, մեր կյանքով կարող ենք արտահայտել Քրիստոսի Մարմինը՝ Եռամեկ Աստծու փառքի համար դառնալով Քրիստոսի ընդհանրական արտահայտությունը՝ Եփս 1:23, 3:21, Ա Կրթ 10:31, Ա Պտ 4:11, Հյտ 21:10-11: